

ՄԱՍԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ:
Տէլէֆօն № 253.

Վշտահար Մովսէս Ահարոնեան և Սօֆիա Սարգսեան Ահարոնեանցները զաւակներով, խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինները թանգազին որդու, իսկ վերջինները եղբոր

ԲՈՒՇԿ ԱՒԵՏԻՔ ՄՈՎՍԵՍԵԱՆ ԱՀԱՐՈՆԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 2-ին երեկոյեան ժամը 9-ին: Ամբիժը ամեն օր երեկոյեան 7 ժամին (Լեւոնտօմօսկայա փողոց № 4): Յուդարկաւորութիւնը չարաթ, մայիսի 7-ին, առաւօտեան 10 ժամին դէպի Մօզնուս. Գէորգ եկեղեցին: Թաղումը թօղվում էր գերեզմանատանը:

(չ. ու.) 2—2

ԲՈՒՇԿԱՆՈՒԹԻՒՆ

Վստահութիւն դէպի ժողովրդի իմաստութիւնը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան փոխարքան. Փոխարքայի ընդունելութիւնը. Ընթերցողի օրագիրը. Թատրոն և երաժշտութիւն. Պարսկական ցուցահանդէս. Պէտք է երախտագէտ լինել. Մարդիկ թէ անասուններ. Նամակ Բուխարսից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նուիրատուութեան մը առթիւ:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Կովկասեան Փոխարքան հաւատում է կովկասեան ժողովրդի «իմաստութեան» և նա վստահ է, որ այդ իմաստութիւնը ներգործական դեր կը կատարէ երկիրը խաղաղացնելու և նրան շինարարութեան ճանապարհի վրա դնելու գործում:

Երկիրը, անշուշտ, կը խաղաղվի, երբ վստահութիւն կը մտնի ազգայնականութեան մարքի մէջ, թէ նա կարող է իր կարիքները և պահանջները ազատօրէն յայտարարել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՒՐԱԲԱՐՄԱՍԻՍԻ ՄԸ ԱՌԹԻՒ

Վեհեմտիկ, մայիսի 1-ին Տեղեկութիւնները, որոնք զանազան քաղաքներէ մեզի կը հասնին, կը հաւաստեն, թէ թիւրքահայատակ հայերը կողմորդին ու սիրտ կառնեն, երբ «Մշակ»-էն կիմանան, թէ Կովկասի համար շնորհ, ցանկալի օրեր են գալիս: Մենք ձեզի խնդակից, կը մաղթենք վերադարձը այն օրերուն, երբ Կովկասը թիւրքերէն հայոց համար «մի ձգողական ոյժ դարձել էր», և այդ ուժն էր, որ օրին մէկն ալ թիւրքերէն հայոց պատրիարքը մինչև Սան Սթեֆանօ կը մղէր, ուստի յաղթական բանակներուն գերիկ նետուելու: Հիմա, երբ ժողովրդի օրերը կաւաւորուին ձեզի, մեր աչքերն ալ անշուշտ կը կենդանան: Կովկաս պիտի յառնի: Ուրեմն, «Մշակ»-ը թող նորէն մեր միջև «սրտէի սիրտ ձաքայ» հորդէ, ինչպէս հորդեց 1877-էն յետոյ:

Նորածագ թուականի մը աւետարանը համարուի թիւրքն այն նուիրատուութիւնը, որուն լուրը անշուշտ Ներքինապետի մամուլէն իմացած կըլլար: Պօղոս փաշա Նուպար, բառուռ հազար անգլիական ոսկի (400,000 ռուբլի) կը յատկացնէ, Ներքինապետ առաքական վարժարանի մը հիմնարկելու նպատակաւ: Թիւրքերէն հայոց ունեւոր դասակարգը մեզի ասանկ անակնկալներով շփացնելու սովորութիւնը չունենալուն, պահ մը կարծեցի, թէ աս լուրն ալ Ներքինապետին կատակաբանական մէկ դաւադրանքը ըլլայ, ուստի վարանցայ զայն թիւրքացութեան մը նիւթ ընել: Բայց նորագոյն տեղեկութիւնները լուրին ճշտութիւնը կապահովեն. ուստի և զայն հաղորդելով «Մշակ»-ին, առիթն էր հաղորդելու մը խնդիրներ յուզելու համար:

Թիւրքերէն հայոց հանրային կեանքին ժամանակակից պատմութեանը մէջ, առաջին ան-

հնէ, թէ նա իրաւունք ունի հանդէս բերել իր նախաձեռնութիւնը և ստեղծագործական ոգին, թէ նա հնարաւորութիւն ունի կազմակերպելու հաւաքական գործունէութիւն և թէ նա ձեռնհաս է մի շարք հասարակական հաստատութիւններ հիմնելու իր շինարարական ծրագիրները իրագործելու նպատակով:

Մեր կարիքները մի անձ բազմութիւն արդէն հրապարակ է հանվել և նրանցից մի մասը բաւական ուսումնասիրված և մշակված է: Բայց կեանքը աւել բարդ է և բաղադրեալ, քան նա մեզ հի է մեր ձեռքի տակ եղած նիւթերը: Եւ այժմ, երբ խոստացված է, որ կը բացվեն մարդկանց բերանները խօսելու համար, կը բացվեն նոյնպէս աստիճանները դռները զեկուցողներ ընդունելու համար, մենք հանդիսատես կը լինենք, թէ ինչպէս կենսական խնդիրները անթիւ բազմութիւն ասպարէզ կը գայ, պահանջելով ուղեղները և ձեռքերը եռանդուն գործունէութիւն նրանց բաւարար լուծում տալու համար:

Ժողովրդի մէջ արդիւնաւետ կերպով

գաւառ է, որ այսպիսի մեծաքանակ նուիրատուութիւն մը կարճապաշտութիւնը, ազգին համար այս լուսավոր սէրը համատարածի և ուրիշ սրտեր ալ վառէ: Եւ արդէն, վերջին տասնեակ տարիներու մէջ մեր զբաւառէր դասակարգը քիչ մը ցնցուցաւ, ու իր ցնդին զարգացմանը նպաստելու յօժարակամութիւն ցոյց կուտայ: Կ. Պօղոս թիւրքերը դեռ նոր արձանագրեցին հայ կնոջ մը տիկին մեղեկեանին՝ չորս հազար ոսկի (40,000 ռուբլի) չափ) գումարի մը նուիրատուութիւնը ի նպատակ զանազան հաստատութեանց: Երկու տարի առաջ, Մարտի վախճանած հայ մը Կիւմուքի, իր հարստութեան կնոջ, տաս հազար ոսկի (մօտ 100,000 ռուբլի) մեր կրթական գործին յատկացուց: Նոյն միջոցները Պարիզ կ'ունէր Յակոբեան հարիւր հազար Ֆրանկ (գրեթէ 40,000 ռուբլի) Զէյթունի կրթութեանը նուիրեց: Մի առ մի չեմ կրնար յիշատակել այլ և այլ նուիրատուութիւններն ու կտակները, որոնք տաս տարուան ժամանակամիջոցի մը մէջ յատկացուցան ի նպատակ թիւրքերէն հայոց կրթական և բարեգործական նուիրատուութեանց:

Զէ, թիւրք չենք առնել ու վեր վեր չենք թռչել: Գիշ, շատ քիչ, չնչին են այս օժանդակութիւնները, որոնք սահմանաւոր են մեր վերածնունդը զիւրացնելու: Բայց զանոնք իբր բարեգործակ շնորհներ նկատելով, մեծագոյն գործեր կ'անկալենք, աշակցութեամբ մամուլին:

Առևտրական վարժարան մը հիմնելու խորհուրդը պատեհութիւն մըն է, որ վերստին նկատողութեան կ'առնենք թիւրքերէն հայոց անտեսական կեանքի խնդիրները, որոնցմով հերոս «Մշակ»-ին մէջ զբաղիլ սկսանք: Ներկայիս վառ է, բայց ապագային վստահաբար կ'երեւի. եւ օպացիոս, ու յատկապէս գերմանացիներ օրին մէկը, և շատ հեռու չէ այդ օրը, թիւրքերէն ըրող ընդհանրապէս պիտի սարկացնէ, ի թէ հիմա կ'ընենք ինչպիսիք պատմութեան չը պարտաւոր լըջօրէն:

Երբ մեր հին պատմութիւնը կը կարդանք, միշտ աւել ու վառ կ'ենենք, թէ ինչու մեր

մտածող մարդիկ շատ կան, առօրեայ կեանքի մէջ մենք ամեն օր լսում ենք խելացի նկատողութիւններ և առաջարկութիւններ կեանքի պահանջները վերաբերութեամբ, բայց նախաձեռնութեան ոգին թմրած է: Խելացի միտք յայտնողը և նպատակաւոր մարդ առաջարկութիւն անողը չէ փորձում տարածել և քարոզել իր միտքը և առաջարկութիւնը, չէ վստահանում որք զինք իրագործութեան ճանապարհի վրա: Ինչպէս, ինչ պատճառով: Որովհետեւ նա դարձը շարունակ զրկված է եղել նախաձեռնութեան ազատութիւնից, որովհետեւ շրջապատող պայմանները չեն խրախուսել, չեն նպաստել, չեն քաջալերել նրան, այլ կաշկանդել են և երբեմն շատ լուրջ պատասխանատուութեան ենթարկել:

Թող նախաձեռնութեան ոգին զրկի նպատակաւոր պայմանների մէջ և մենք արդարեւ կը տեսնենք, որ ստեղծագործական ոյժեր արդիւնաբերելու ընդունակութիւնն անսպառ է այն աղբիւրի մէջ, որ կը լրում է հասարակութիւն և ժողովուրդը անունները:

Այն վստահութիւնը, որ յայտնում է Փոխարքան դէպի մեր երկրի ժողովուրդը, կարող է յիշատակել բեղմնաւոր արդիւններ առաջացնել, եթէ այդ ժողովուրդը կարող լինի պարզել իր թնեքը, հանդէս բերել իր բոլոր ոյժերը և տալանդը մեծ շինարարական գործում երկրի բարօրութեան համար:

հայերը չեն միացած ու թուրք չեն կանգնած դրսէն արշաւանքներու հեղեղատառ ուղղված առջև: Ահա մեծ ողորդում մը կը սպասենք մեզի. օտար ազգեր կամայ կամայ մեր հողերը պիտի գրաւեն երկաթուղիով, ու պիտի գան հոն աղբիւր իրենց գրամով, իրենց գիտութեամբ: Ինչնապաշտպանութեան թուրքերը ինչպէս չենք բարձրացնել:

Բայց աչքերնիս կարծես բացուելու վրա է. այն թուրքն առաջին վէճերը կը գետնադնէ. Պօղոս փաշա Նուպար՝ գիտական մարդ և գործնական խելացի օժտուած, կը նախատեսէ թէ, մեծ մրցումին մէջ, հայը պէտք է զբաղանք գիտութեամբ սպառազինի, որպէս զի իբր վաճառական իսկ, կարող ըլլայ օտարին դէմ լինել: Այս օրինակը աչքերնուս առջև ունենալով, թուրքը մեծատարած պատրաստելու հետամտի: Տարակոյս չը կայ, թէ ողորդութիւն միայն մենք չենք, որ պիտի վտանգուինք, այլ՝ իսլամներն ալ և ուրիշ քրիստոնէայ ցեղեր ալ մեզ հետ հաւասարապէս պիտի փչանան:

Առ այժմ նկատողութեան չեմ առնել, հայրենակից ուրիշ ցեղերու հետ գործակցութեան խնդրը, վրան զի այդ հարցը թիւրք լրազբաւան շրջանակէ դուրս հանելին թիւրք աւելի օգտակար համարուի: Ուրեմն, այս էջերուն մէջ մենք մեզմով զբաղենք:

Աւելորդաբանութիւն պիտի ըլլայ ծանրանալ լաւագոյն կարեւոր դերին վրա. ամեն հայ լալ գիտէ, թէ մեր տղաքը պէտք է գիտութեամբ սպառազինուին: Ինչ որ կը պակասակալն մեզի, այն կամքն է: Խելք ունենք, բայց կամք չունենք: Մեր հիւանդութիւնը կամքի տկարութեան մէջ փնտռելու է:

Արտասահման կրթական երեք հիմնարկութիւն պիտի կրնան մեծապէս սատարել մեր գիտականօրէն զարգացմանը: Այս վարժարաններն են՝ Գահիրէի, Ալեքսանդրիոյ դըպրոցները և Վենետիկի Մուսա-Ռաֆայէլեան հիմնարկութիւնը: Այս հաստատութիւնները զբաւական շատ նպատակաւոր պայմաններու մէջ կը գտնուին, ու կառավարական ու և միջամտութիւն իրենց շարժումները չի կաշկանդել: Եւ սակայն, ինչ է իրենց ծրագիրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈՒՍԴՐՈՒՆ

Կոմս Իլլարիօն Իվանովիչ Վօրոնցով-Դաշկով ծնվել է 1837 թիւ մայիսի 27-ին: Նա Կովկասի հռչակաւոր փոխարքայ իշխան Վօրոնցովի մօտիկ ազգականն է, իսկ նրա կինը, կոմսուհի Երզնակտա Անդրեւնայ, իշխան Վօրոնցովի հարազատ թոռն է:

Կոմս Վօրոնցով-Դաշկով զինուորական ծառայութեան մէջ մտաւ 1858 ին և նրա առաջին գործունէութիւնը այդ ասպարէզում Կովկասն էր, ուր նա մասնակցեց Դաղստանի, ապա և արեւմտեան Կովկասի պատերազմներում: Եւ եռանդուն գործունէութիւն ցոյց է տուել կոմսը և թուրքստանում, ուր 1862-ին մասնակցում էր Բուխարան նուաճելու գործում: Իսկ վերջին ուսման թիւրքական պատերազմում նա հեծելազօրքի գլխաւոր հրամանատար էր Բուչչուկի ուսաց բանակում:

Այնուհետեւ վարելով զանազան բարձր պաշտօններ զինուորական վարչութեան մէջ, կոմս Վօրոնցով-Դաշկով 1881 թուականին Ալեքսանդր III Կայսրի հրամանով նշանակվեց կայսերական պալատի մինիստր: Այդ պաշտօնը նա վարեց Ալեքսանդր III-ի ամբողջ թագաւորութեան ընթացքում: Նիկոլայ II Կայսրի թագաւորութիւնից յետոյ կոմսը հիւանդութեան պատճառով արձակվեց պալատական մինիստրի պաշտօնից և նշանակվեց պետական խորհրդի անդամ:

Երբ սկսվեց ներկայ ուսմանական պատերազմը, Վօրոնցով-Դաշկով ընտրվեց ուսաց Կարմիր խաչի ընկերութեան գլխաւոր վարչութեան նախագահ և իր եռանդուն գործունէութեամբ ընդհանուր համակարանը գրաւեց:

ազգին ընդհանուր վիճակը նկատողութեան առած ու ըստ այնմ խորհած են: Ոչ: Ազատ երկիրներու մէջ բարձրացած այդ ուսումնականները արդեօք օրինակ եղան թիւրքերէն հայոց վարժարաններուն: Եւ ոչ իսկ մտքէ անցնելու է: Ուստի, երբ մեր հայրաքին կըրթութեան հարցը հզօրապէս ձեռք առնուի իբր օրումն հրատապ խնդիր, նախ և առաջ այս երեք հաստատութիւններն են, որ իրենց վրա պէտք է կենտրոնացնեն ամենուս ուշադրութիւնը և հոգածութիւնը:

Անցնենք թիւրքերէն: Հոն մի հարցն էր, մի փնտռել: Գաղութիւն ունենանք բացարձակօրէն յայտարարելու, թէ թիւրք կառավարութիւնը ինքը չէ մեր վարժարաններու վիճակին պատասխանատուն: Ազգային երգերը արգելուած են, ու ազգային պատմութեան ուսուցումն ալ ըստ բաւականին աղտոտ թուրքաւոր չէ: Բայց մեր տղաքը մտադ ընկու մեր փափազները բնաւ արգելքի մը չեն հանդիպել: Ազատօրէն կրնանք մեր տղոցը գիտութիւն սորվցնել, լեզու սորվցնել, բարոյականին բարձրացնել, նկարագրելին զօրացնել ու մարմնով ընդունող ընել: Մէկը մեզի ըսած է թէ ձեր տղոցը արհեստ մի սորվցնէք. մէկը մեզի արգելք եղած է մեր զաւակները վաճառականութեան, երկրագործութեան, ճարտարաւորութեան պատրաստելու:

Անցնալին մէջ փորձը ցոյց տուաւ որ, թիւրքերէն հայերը եթէ հազի կարող են լաւ կրթարաններ հիմնել, ուր ժողովրդին պէտքերը գոհացնող հիմնարկութիւններ: Վախի 1879-ի վարժապետանոցը և Կ. Պօղոս Կենտրոնական վարժարանը պատմութիւններ ունին, որոնք կը հաստատեն, թէ երբ կամք ունենանք, խելք ալ կ'ունենանք:

Նուպար Պօղոս փաշային խորհուրդները պատեհ առիթ մը կը հայթհայթեն ձեռք առնելու համար անտեսական ու կրթական հարցերը: Այսօրումն համար բաւականին համարեմք այսքան յառաջարան մը, և հետզհետէ առաջ վարենք մեր ճակատամարտը:

Ահա այդ պաշտօնի մէջ էր նա, երբ նշանակվեց Կովկասի փոխարքայ: Կարմիր Նաչի վարչութիւնը, ստիպված լինելով բաժանվել իր հունգարացի, գործունեայ և ամենքի սէրն ու համակրութիւնը վայելող նախագահից, մատուցեց նրան շնորհակալութեան ուղերձ, որի մէջ յայտնում էր թէ պատերազմում ֆլաւա-վածներին խնամելու գործը որքան նշանակող կորուստ է կրում, զրկվելով իր նախագահից, այնպիսի մի ժամանակ, երբ տեղի ունի իր արեւմտահայկական անօրինակ պատերազմը:

Կոմսը, պատասխանելով լուրջ և ներկայաց-նողներին, ասաց թէ Ռուսաստանի ներկայ ծանր դրութեան մէջ իր համար ամենափայ-լուն յիշողութիւններ կը թողնէ մինչև կեանքի վերջը այն ժամանակը, երբ նա ծառայում էր Կարմիր Նաչին:

ՓՈԽԱՐԿԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 5-ին Թիֆլիսը հանդիսաւոր կեր-պով ընդունեց Կովկասեան փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովին:

Առաւօտեանից քաղաքը ընդունել էր տօնա-կան, հանդիսաւոր կերպարանք: Տները զարդարվել էին դրօշակներով, պատշգամբնե-րից շատերը ծածկվել էին գոյնզգոյն գորգե-րով: Քաղաքի մի քանի հիմնարկութիւններ առանձին ճոխութիւն էին տուել իրանց զար-դարանքներին, ինչպէս, օրինակ, արտիստական ընկերութիւնը: Սկսած ժամի 12-ից այն փո-ղոցները, որով պէտք է անցնէր փոխարքան, սկսեցին լցվել ժողովրդով: Ժամի 2-ից յետոյ Գօրովնսկի պրօսպեկտը արդէն դարձել էր անսնցանկ: Փողոցի երկու կողմից կանգնել էին զօրքի և ժողովրդի շարքեր: Զարդարված էին քաղաքային տունը, Գօրովնսկի և Միքա-յէլիան պրօսպեկտները մի քանի շէնքերը:

Երկաթուղու կայարանի առաջ կանգնած էին բազմաթիւ կառքեր, իսկ պատֆօրմի մասը, մաքուր ու զարդարված, փառաւոր տեսք էր ընդունել:

Երկաթուղու պատֆօրմը, հանդիսաւոր կամ արքայական սենեակները լիքը լցված էին դի-մաւորողներով, որոնց մէջ աչքի էին ընկնում փոխարքայի օգնականները, ամբողջ գնդա-լիտէտը, զինուորական, դատական ու այլ վար-չութիւնների բարձր պաշտօնեաները, վրաց ազնուականութեան ներկայացուցիչները, Թիֆ-լիսի քաղաքագլուխը, վաճառականները, մեշ-չանները և արհեստաւորների աւագներ, բազ-մաթիւ տիկիներ, որոնց մէջ և հայ ու վրացի կանանց ընկերութիւնների ներկայացուցիչներ, և այլն և այլն:

Գնացքը, որ սովորաբար ձիւղ նշանակված ժամանակից ուշ է գալիս, այս անգամ ժամը 2-ից էլ 6—8 րօպէ առաջ հասաւ կայարան:

Գնացքի 9 մեծ վագօնները զարդարված էին դրօշակներով և կանաչներով:

Կայարանի առաջ կանգնելուն պէս, նորին պայծառափայլութեան վագօնը մտան իշխան Շալվաթիւնի և ուրիշ պաշտօնատար անձեր: Կոմսը և կոմսուհին դուրս եկան վագօնից: Դարձաբազուկը ներկայացրեց աղ ու հացը և արտասանեց հետեւեալ ձևով.

«Թող տուէ՛ք ինձ Թիֆլիսի քաղաքի ազգա-բնակչեան կողմից ողջունել Ձեր բարի գա-լուստը ղէպի այն երկիրը, որ Թագաւորի կամ-քով Ձեզ է յանձնված իբրև Նորին Կայսերա-կան Մեծութեան Փոխարքայի Կովկասում: Ամբողջ բնութեան վերանորոգման այս գար-նանային օրերում այնպէս լի է ժողովրդի հոգ-ին շնորհաւատով ղէպի իր լուսաւոր ապագան և այնպէս ուժեղ կերպով դուրս են թռչում ամենայաւ բարեմակութիւնների ղէպի Ձեզ, որ կոչված էք զնրաւ երկիրը վերածնութեան ուղի վրա տեղական ժողովուրդների բոլոր խաւերի միահամուռ աշակցութեամբ: Երկար տարիներ անցան այս վայրկեանի սպասման մէջ: Շատ բան է տեսել մեր երկիրը, որ հա-րիւր տարի ձգտում էր սերտ միութիւն հաս-տատուել Ռուսաստանի հետ, ճանաչելով ընդ-հանրութիւն պատմական մեծ նպատակների մէջ: Բայց չը նայելով անցեալի վրա, որ կազմում է պատմութեան սեփականութիւն մեր ազգաբնակչութիւնը, որը բարի զգաց-մունքներին պատրաստ է նոյնով պատաս-խանելու, որ դերազգաց է ղէպի վստահու-թեան հաւատարմութեան: Հանդիպում է Ձերդ Պայծառափայլութեանը լիաւատ յոյսով ղէ-պի Ձեր մարդասէր միասնան Կովկասում կեղծարարական առաւ ժողովրդի կողմից: Այս հա-ւատի մէջ մենք ամուրի ենք: Հաստատ է ան-սասան է մեր սէրը ղէպի ամեն մի ազնիւ և ժարգասէր բան, որ եկել է և գալիս է մեր հայրենիքի սրտից: Եւ թող Ձեզ վրդովմունքով չը զարմացնէ մեր ծայրէ ի ծայր ալեկոծված երկիրը: Ժողովրդական ծովի այդ մեծածուխ ալիքների մէջ արեւելահայկական և օրինա-կանութեան բացառութիւնը չէ արտա-յայտված, այլ ստեղծագործական առողջ

ոյժեր, որոնք գոյութիւն ունեն խորե-րում և ելը են որոնում իրանց համար, ոյ-ժեր, որոնք հպատակվելով ինքնագործութեան վրա հիմնված շինարարաշխատանքի կոչին, կը փոխարկվեն բոլոր ազգութիւնների խաղաղ գործակցութեան: Ներմազին սիրելի հայրենի-քի օգտին: Իբրև աւետարան մեր երկրի վրա բացվող արշալոյսի, մեր ազգաբնակչութիւնը վրաստանի հին մայրաքաղաքի նախադնե-րում հանդիպում է Ձեզ աղ ու հացով, որ նշան է հիւրընկալութեան ու բարեմակութե-ան, և բաց սրտով, լի լուսաւորոյսներով, ասում է Ձեզ, բարի լինի Ձեր գալուստը»:

Յետոյ փոխարքայի օգնական գեներալ Մա-լաւան և յատուկ յանձնարարութիւնների պաշ-տօնեան մի առ մի սկսեցին ներկայացնել նո-րին պայծառափայլութեանը բոլոր ներկայ ե-ղողներին: Երբ հերթը հասաւ Թիֆլիսի աղ-նուականութեան, պարագլուխը կարգաց հե-տեւեալ կարճ ձևով.

«Վրաց ազնուականութեան կողմից ողջունում եմ Ձեր բարեյաջող գալուստը Վրաստանի հը-նազոյն մայրաքաղաքը: Ի դիմաց Ձեր պաշ-տօնափայլութեան, Թագաւոր Կայսրի ներկա-յացուցչի, մենք տեսնում ենք մարդասէր ձրգ-տումով մի անձի, որն իր շուրջն ուղում է սերմանել ճշմարտութիւն և խաղաղութիւն, ո-րին այնքան ծայրաւի է մեր քաղաքաշար հայրենիքը: Բարի էք եկել»:

Գնդապետի ազնուականութեան պարագլուխը և մի ձառ արտասանեց, որի մէջ ասաց հետեւեալ. «Կովկասը ուսաց կայսրների թա-գի գոհարն է, այժմ ժամանակաւորապէս գոյնը կորցրել է: Մենք կուրօքն չենք հաւա-տում, բայց խորապէս համոզված ենք, որ ձեր պայծառափայլութեան վարչութեան օրով այդ գոհարը նորից կ'առնէ իր փայլն ու զար-դացումը, ինչպէս մեծ փոխարքայ Վորոնցովի օ-րով»:

Կոմսը պատասխանեց, որ ինքը կաշխատե-լնթանալ Մ. Վորոնցովի ուղիով, որ նա տաճում է յարգանք ղէպի վրաց ազ-նուականութիւնը և յայտնում, որ նա պահ-պանել է իր հին աւանդութիւնները. կոմսը յայտնեց, որ նա կը հրաւիրէ ազնուականու-թիւնը այն շինարարական գործին, որ նա ծրագրել է:

Այն ժամանակ երբ կոմսին ներկայացնում էին բոլոր ներկայ եղողներին, կոմսուհին, ստանալով իրան մատուցված ծաղկեփնջե-րը, թուով 5—6 հատ, ծանօթացաւ ներկայ եղած տիկիներին և նրանցով ընդապառնց:

Այդ կարճ ցերեմօնայից յետոյ կոմսը ձի նստեց և իր շքախմբով ճանապարհ ընկաւ ղէպի Վոկլաշի փողոց, ուր նրան ողջունե-ցին զինուորները և ժողովուրդը որոտաբին «ուրա»-ներով: Որոշված մարշրուտով Փո-խարքան հասաւ Սիօնի տաճարը, ամեն կող-մից ուղերձ-ներով ուղեկցված:

Սիօնում նրան սպասում էին Վրաստանի էկզարխը, Գօրու եպիսկոպոսը, սէմիտարիայի տեսուչը և քահանաների դասը: Նրանք զգես-տաւորված սպասում էին Փոխարքային ժամը 2 ից սկսած:

Կայարանում հանդէսը վերջացնելուց յետոյ Փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյը և ուրիշ պաշտօնեաներ եկել էին արդէն Սիօ-նի տաճարը: Ժամը 2½-ի մօտեւ ժամանեց և Փոխարքան:

էկզարխը նրան դիմաւորեց «Բրիտանոս յա-րեաւ»-ով և ապա մի փոքրիկ ձառ արտասա-նեց, որի մէջ բարի գալուստ մաղթելով, նը-կարագրեց Կովկասում տիրող խառնակու-թիւնները ու անկարգութիւնները և յոյս յայտ-նեց, որ շուտով այդ ամենը կը հանդարտվի ու կարգի կ'ընկնի:

Փոխարքան համբուրելով էկզարխի ձեռքի խաչը և օրհնված շրով օծվելով Գօրու եպիս-կոպոսից, լսեց համառօտ մաղթանքը և ճանա-պարհից Վանքի մայր եկեղեցին:

Վանքի բակում երկարեց կանգնած էր քահանաների դասը, իսկ Վանքի ներսում թեմակալ առաջնորդ Սաթունեան եպիսկոպո-սը, չորս վարդապետներ և մի քանի երիցա-գոյն քահանաներ:

Երբ Փոխարքան մտաւ Վանքի տաճարը, Սաթունեան սրբազանը նրան դիմեց հետեւեալ ձևով.

«Ձերդ վսեմափայլութիւն Տէր Փոխարքայ. Ողորմութեամբ Աստուծոյ այսօր ինձ է վի-ճակվել ողջունել իմ Պապական Թագաւորի Փոխարքային:

Ձերդ վսեմափայլութեան բարձր ուշադրու-թիւնը հայոց հնադարեան քրիստոնէական ե-կեղեցուն և նրա հօտին, արքայական բարե-հաճութեան գրաւական է մեզ համար: Այդ այցելութիւնը արժարժում է մեր սըր-

տերում հիացմունք և երախտագիտութիւն ղէպի ձեռք պայծառափայլութիւնը. նա հա-ւատ է ներշնչում մեզ, թէ կիրականան մեր փայտաշար իղծերը, թէ առաքինազարդ Փո-խարքայի հոգը ձեռքը կը շնորհէ մեզ խա-ղաղութիւն, արդարութիւն և միութարութիւն»:

Կոմսուհին իր կողմից ցանկութիւն յայտնեց տեսնել ս. Յակոբի մասունքը, որ պահվում է Վանքի տաճարում:

Վանքից Փոխարքան նոյն շրով դիմեց մահ-մեղականների մզկիթները, ուր հանդէսներով ու ձառերով զինուորացիներ նրան: Ժամը 4-ին Փոխարքան ժամանեց իր բնակավայրը—պալատը:

Փոխարքայի պալատում ժողովված էին հո-գեւորականութեան, վարչական մարմինների և հասարակական հիմնարկութիւնների ներկա-յացուցիչները:

Այստեղ էին Վրաստանի էկզարխը և Վրաս-տանի հոգեւոր վարչութեան բարձրագոյն պաշ-տօնեաները: Հայոց հոգեւորականութեան կողմից այնտեղ էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Գա-րեգին եպիսկոպոս Սաթունեան, Նիքիմ վարդ-Սուրբասեան, Թիֆլիսի կոնսիստօրիայի ան-դամների հետ միասին: Ներկայ էին և հրէայ հոգեւորականութեան ներկայացուցիչներ:

Միւս քրիստոնեայ համայնքներից ներկայ էին Կովկասում գտնվող հայ կաթօլիկների գլխաւոր կառավարիչը, կաթօլիկ միւս եկե-ղեցիների վիզիտատօրը և Թիֆլիսի աւետարա-նական-լուծութեական համայնքի պատօրը:

Մահմեդական հոգեւորականութեան կողմից ներկայ էին Կովկասի շէյխ-ու-իսլամը, մուֆ-տին, շիա և սուննի հոգեւոր վարչութիւնների անդամների հետ միասին:

Կայսերական արքունիքի պաշտօնեաները, զինուորական դասի ներկայացուցիչները, շտաբի գլխաւոր պաշտօնեաները, Փոխարքայի խոր-հրդի անդամները, պետական գնահատման հիմ-նարկութիւնների գլխաւորները, աղմիխտ-բացիայի ներկայացուցիչները, դատաւարա-կան հիմնարկութիւնների գլխաւորները կազ-մում էին Կովկասեան ընդհանուր վարչական մարմնի ներկայացուցչութիւնը:

Տեղական ազգաբնակչութեան ներկայացու-ցիչներից այնտեղ էին՝ 1) Թիֆլիսի նահան-գական ազնուականութեան պարագլխի պաշ-տօնակատարը և գաւառական պարագլուխ-ը՝ ազնուականների հետ միասին: 2) Թիֆ-լիսի քաղաքագլուխը ու պարավայի անդամնե-րի և ճայնաւորների հետ միասին: 3) Թիֆլիսի մամուլի օրգանների խմբագիրնե-րը: 4) Գիտնական և բարեգործական ընկե-րութիւնների նախագահները խորհրդի ան-դամների հետ միասին: 5) Վաճառական դա-սակարգի և բանկերի ներկայացուցիչները:

Երևանի քաղաքագլուխը, Երևանի քաղաքի կողմից ողջունելով կոմսին յայտնեց քաղաքի ցանկութիւնը տեսնել կոմսին Երևանում: Կոմ-սը պատասխանեց, որ նա չէ կարող որոշել ժամանակը, բայց նա կը լինի անպատճառ և կայցելէ հայոց Կաթողիկոսին:

Ներկայ էին և Թիֆլիսում գտնվող զանա-զան պետութիւնների կողմից նշանակված հիւպատոսները:

Փոխարքան մօտենում էր ներկայացուցիչ-ների խմբերին և ողջունում նրանց: Ընդու-նելութիւնը վերջացաւ ժամը 5½-ին:

ԸՆԹՈՒՆԵԼՈՒ ԵՐԱՐՈՒՄԸ

XVIII

Բագուի քաղաքագլուխ պ. Իրեցկին փե-տրվար 6—10-ի արևմտ օրերում «Փառա-հեղ առանձնութեան» գիրք էր ընկել: Ձայն ու ծպուտ չէր հանում, երևի նոյնպէս համակ-ված էր Բագուի պաշտօնական աշխարհի այն տրամադրութեամբ, թէ ոչինչ չէ կարելի ա-նել, թէ մարդկային ոյժից վեր է արեւահե-ղութիւնը դարձեցնելը:

Այդպէս էլ բացարձակ է պ. Իրեցկին իր «Փառահեղ առանձնութեան» պատճառները: Հնար ու ճմր չը կար, պէտք էր տանը նստել, լուռ ու մռնշ խոհերի անձնատուր լինել:

Բայց ճակատագիրը ինչպէս գիտէ հեղին: Այն ժամանակ, երբ պ. Իրեցկին լուռ ու մռնշ նստած էր, զգալով «Փառահեղ առանձնու-թեան» բոլոր յարմարութիւններն ու անհրա-ժեշտութիւնը, մի ուրիշ քաղաքագլուխ, հե-ռաւոր Թիֆլիսից, ձեռք տակ ունենալով հա-մարեա միայն հեռագրական թիւը, խաղաղու-թեան, մարդկայինութեան, հաշտութեան ձայն էր հնչեցնում Բագուի փողոցներում:

Պ. Իրեցկին լուռ էր, պ. Վերմիլիան խօսում, գործում էր: Ո՛վ էր հասարակական զգայուն, սրտացաւ գործիչը:

Պ. Իրեցկին, իր տանը նստած, մոռացել էր, որ 40-ի չափ ծառայողներ փակված են քա-ղաքային տան մէջ և կարող են սովամահ դառնալ, իսկ Թիֆլիսից վագօններով ուտելիք էին ուղարկում Բագու: Ո՛վ է հասարակական գործիչը:

Բագուի քաղաքագլուխը, մեծ իմաստութիւն համարելով անգործութիւնը այն ստակալի օրե-րում, պակաս մեծ իմաստութիւն չէր համա-րում և այն, որ իր «Փառահեղ առանձնու-թեան» մասին նոյն տեսակ փառահեղ լուռ-թիւն պահպանվի: Ոչինչ չէ արել մարդը, հե-տաւար իրաւունք ունի պահանջելու, որ իր մասին ոչինչ չը խօսեն: Փողոցները Բագուում չորս օր ներկվում էին արեւով, և պէտք է ընդունել, որ այդ ժամանակ քաղաքագլուխ գո-յութիւն չունէր, չը կար աշխարհի վրա: Վը-տանգի ժամանակ ապառով անկեւններ որո-նող «քաջերի» հոգեբանութիւնն է սա—չիք համարվի...

Բայց այդպէս չեղաւ, որովհետեւ մեր ժամա-նակները հասարակական հոսանքների մէջ այդպիսի բան չէ կարող լինել: Յիշեցին պ. Իրեցկու անունը: Առաջին անգամ պ. Կոնս-տանտին Պոսոմարեվ «Сынъ Отечества» լրա-գրի մէջ տպված իր գեղեցիկ, փաստալից յօ-դուածում Բագուի սարսափները շարժում նը-կարագրեց և պ. Իրեցկու «Փառահեղ առանձ-նութիւնը»: Պ. Իրեցկին լուռ մնաց: Անցան շա-բաթներ: Նոյն լրագրում տպվեց քաղաքային վարչութեան մէջ ծառայողների ժողովում կազմված արձանագրութիւնը, որի թարգմա-նութիւնը տպվեց և «Մշակի» մէջ:

Այս անգամ այլ ևս չը կարողացաւ լուռ պ. քաղաքագլուխը և իր գնահատները ներկա-յացրեց Դոմայի նիստին: Այդ նիստի նկա-րագրութիւնն էլ տպված էր «Մշակում»:

Վերին աստիճանի յուզիչ էր այն սրանչիլի պատրաստականութիւնը, որով Բագուի ձայ-նաւորները եկան իրանց ընտրեալին պաշտ-պանելու: Քիչ էր մնում, որ ճայնաւորական պիւժ-խօսութիւնը խելդվի խանդաղատանքի արտասուքների մէջ:

Ինչ տեսարան: Պ. Իրեցկու դէմ հրատա-րակված էին որոշ ամբաստանութիւններ: Այդ մեղադրական կէտերը մէկիկ մէկիկ չը կար-գացվեցին և չը հերքվեցին ժողովում: Գործը աւելի պարզ և հեշտ կերպով կատարվեց: Դա-ղաքագլուխը նախ յիշեց իր ծերութիւնը, յի-շեց, որ իր մի ոտը արդէն գերեզմանի մէջ է, յիշեց, որ 30 տարե ծառայում է քաղաքին և ապա ասաց, սր իրան մարդասպան են հրա-տարակում:

—Սուտ է, սուտ է, կանչում էին ճայնա-ւորները, իսկ պ. Իրեցկին զգացվում էր: Փաստը անհրաժեշտ էր: Հասարակութեան ներ-կայացուցիչները արդարացնում են քաղաքա-գլխին և սա, աւելի ոգի առնելով, յարձակ-վում է պ. Պոսոմարեվի և Դոմայի ծառայող-ների վրա, անուանելով նրանց ստախոս:

Աղմուկով, միմյանի ծուռաւ բացականչու-թիւններով Դոմայն վճիռ է կայացրում մա-մուլի մասին, հերքում է այն, ինչ պէտք էր հերքել մամուլի, հրապարակական խօսքի իս-կական նշանակութիւնը հասկացող քաղաքա-կերթ աշխարհում ընդունված միջոցներով:

Բայց պ. քաղաքագլուխը գիտէ և մամուլի նշանակութիւնը: Նա ասում է, որ եթէ իր մասին գրողները դիմած լինէին մի «МОСКОВ. ВѢД.» լրագրին (գիտէ, երևի, որ խելքը գըլ-խին մարդը չէր դիմի այդ լրագրին), ինքը չէր խօսի, բանի որ գիտէ թէ ինչ տեսակ լրագիր է դա: Բայց, շնորհ արեք, տպել «Сынъ Отечества» լրագրում... Դա առաջա-դիմական լրագիր է, ներկայացնում է ուսուցչ հասարակութեան լաւագոյն մասը, ուրեմն և նրա մէջ տպված մեղադրանքը պիտի ծանր, անտանելի լինի իւրաքանչիւր ազնիւ, առա-ջադէմ մարդու համար:

Այդ խօսքերի տպաւորութիւնը, ի հարկէ, անգրին էր: Եւ Բագուի ճայնաւորներից ոչ մէկը չը նկատեց, որ իրանց ընտրեալը իս-կոյն, տեղի ու տեղը, րօպէ չանցած, ընկաւ հակասութեան մէջ: Նա ասաց որ պ. Կոնստան-տին Պոսոմարեվը «ВѢД. ИЗВѢ.» լրագրի խմբագիրն է և որովհետեւ Բագուի այդ թիւ-թը հայերի օրգան է, ուստի ինքը, պ. Իրեցկի, գալիս է այն եզրակացութեան, որ պ. Պո-սոմարեվ «Сынъ Отечества» լրագրի մէջ առ-տայայտել է հայ հասարակութեան հայեացը-ները պ. Իրեցկու մասին:

Այստեղ պրօգրեսիվ լրագրութեան եր-կրպագու պ. Իրեցկի փառաւոր կերպով նըս-տեց... Սուլթանի կողքին: Յայտնի է, որ Սուլթանը, երբ բան չէ գտնում ստեղծ իր «առաքինութիւնները» մեղակցող լրագրիչներ

որը աչքը է ընկնում մեր կենսային հանգամանքներում: Բայց միթե հարկ կայ ասելու, որ վերը յիշված այդ երկու բժշկներն էլ գաւառական են, այն ինչ Նոր-Բայազետը էր 10,000 բնակիչներով գուրկ է քաղաքային բժշկից: Եւ ահա այդ պատճառով զանազան վարակիչ հիւանդութիւններ այսօր իրանց զոհերն ունեն ժողովրդի խաւերում: Հէնց Զատիկի օրը 4—5 մեռածներ կային մեր քաղաքում՝ բզաքաւին և այլ տարածուած հիւանդութիւններին զոհ գնացած: Այո, հէնց Զատիկի ս. Յարութեան օրը, երբ ուրիշ տեղեր ուրախանում—ցնծում էին, մեզանում շատերը սուգ ու յիւսն էին անում...

Ցաւելով եւ յիշում, որ մի քանի ամիս սրանից առաջ, երբ դարձեալ քաղաքային բժշկի հրաւիրելու հարց բարձրացաւ, այն էլ զրոյց եկած մի պարոնի առաջարկութեամբ, հասարակութեան մի փոքրիկ դասակարգ այդ առիթով թղթի վրա մի գումար ստորագրեց, որի մասին մենք ուրախութեամբ արձանագրեցինք «Մշակի» մէջ: Սակայն ամիսս, որ այդ նոյն հարցը հէնց թղթի վրա էլ մնում է մինչև այժմ և գուցէ ապագայում մնայ աւերազործելի, քանի կարծիք կայ, որ 5—10—20—50 բուրլի հաւաքելով մի քանի մարդիկ—մեզ համար մշտական կեանքում չէ կազմում բժշկի հրաւիրելու համար:

Պէտք է ասել, որ մեր միջոցներ գտնել, աւելի խելացի պայմաններ ստեղծել, ինչպէս պ. գաւառականն էլ նոյն միտքը յայտնեց քաղաքային սեփական բժշկի ունենալու համար,—ահա քաղաքային վարչութեան գործը: Ապա թէ ոչ թողնել բոլոր հիւանդներին անխնամ ու գողտիկ տարափոխիչ հիւանդութիւններին ենթակայ,—արդե՞ծ դա պատիւ կը բերէ մեզ: Եւ միթե՞ մարդիկ անասուններից էլ պակաս արարածներ են համարվում...

Գ. Սիւնեան
ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 1-ին
Ձը նայելով որ ուրիշ քաղաքներում միջոցներ են ձեռք առնում սպասովոյ խօրհայի դէմ, այստեղի դուռնայի մարդիկ անգամ չէ անցնում այդ բանը: Հապա թէ Պարսկաստանի որ և է քաղաք այնքան անխնամ և կեղտոտ լինի, որքան կեղտոտ է Գոթայի: Այստեղի կեղտոտութիւնները առասպելական չափերի են հասնում: Մարդ աչքով էլ որ տեսնէ՝ չէ կարող հաւատալ, որ վրաց բանաստեղծութեան մէջ իր գեղեցկութեամբ հռչակված, բընութիւնից առատօրէն պարզկատրված Բմբէթիայի եօթ իշխանութիւնների մայրաքաղաքը, որը արտաքուստ զմայլանք և հմայք է պատանդում, ներքուստ կարող է իր բնակիչներից այսպէս ապականված լինել: Փողոցները դեռ այնքան աչքի չեն ընկնում իրանց կեղտոտութեամբ, որովհետեւ տեղա բամառ և անձրևային լինելով՝ իրանք իրանց շատ թէ բէշ մաքրվում են: Բայց մաքրութիւն սիրող մարդը կարող է սարսափել այստեղի բակերը մանկելով: Այդտեղ ընկած են նիւթված կենդանիներ և աղբով լցված շաքարի տակաւներ և այլ զազրելի բաներ... Այստեղ կանալիզացիա չը կայ և գուցէ երբեք չի էլ լինելու, իսկ արտաքինների կեղտոտութիւնները ոչ թէ փորած հորերի մէջ են հաւաքվում, այլ ուղղակի գետնի երեսին դարձնաւ լճեր են կազմում: Մի քանի իւրաքանչիւր տախտակներ կանգնեցրած են գետնից փոքր ինչ բարձր, իսկ տակը դրած է մի ջարդված տակաւ, ուր իւր թէ հաւաքվել կեղտոտութիւնները, իսկ շատ տեղ այդ էլ չը կայ, այլ վատերկրոյցները ներկայացնում է միայն գետնից մի արշին բարձր կանգնեցրած և մի կողմի վրա ծոված տախտակէ փոքրիկ բալագանը, որի շուրջը խրախճան են կատարում մինչև ականջները ապականված բակերում վխտող խոզերը:

Մարդ խղճահարվում է, իմանալով, որ ինչպէս թիֆլիս մաքրութեան կողմից ամենաչինքն քան զանապուծեան տուած խեղճ տանտէրերին հալածում, պատժում, սուգանքի են ենթարկում, այստեղ ձայն-ծաղւտ հանող չը կայ: Թիֆլիսի տանտէրերի համեմատ՝ այստեղի տանտէրերը տաժանակիր աշխատանքների կամ կախաղանի են արժանի... Սօքրատի կողմից անասունները երկրիւղայի է, որ քաղաքը բաղկացած է այդանտանից, հետեւաբար միւրքը շատ է, իսկ այստեղի ժողովուրդը սիրում է մեծ քանակութեամբ կանաչի և խակ միւրք ուտել:

Ս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1 1/2 թերթի:

Կովկասի փոխարքային Բալաշարի կայսրաւում Բագուից դիմաւորելու եկած հայ և թուրք ներկայացուցիչներին նորին պայծառափայլութեամբ հետեւալ նշանակալից խօսքերն է ասել. «Շնորհակալ եմ, պարոններ, ձեր ուրախ ընդունելութեան համար: Շնորհակալ եմ ձեր աղ ու հացի համար: Կուգէ՛ք ես այդ սրտագին ընդունելութեան և աղ ու հացի մէջ տեսնել ձեր դէպք ինձ ունեցող հաւատի նշանը: Առանց փոխադարձ վստահութեան կամ հաւատի անկարելի է հասնել Կովկասի խաղաղացման այն հիմքերով, որ Թագաւոր Կայսրն իմ անունով տուած բէսկրիպտի մէջ մատնացրոյ է արել: Այդ սկզբունքները ես յայտարարել եմ գէներալ Մալաւային ուղարկված իմ հեռագրում, բայց որպէս զի ստեղծագործող աշխատանքը բեղմնաւոր լինի, անհրաժեշտ է խաղաղութիւն, և ահա ես ձեզ եմ դիմում, Բագուի բնակիչներին ինտելիգէնտ մասին, շատ խնդրելով ձեզ, որ գործ դնէք ձեր բոլոր ազդեցութիւնը ժողովրդական մասնայի վրա՝ նրան խաղաղացնելու համար: Այն տեղային վիճակում, որի մէջ դուք այստեղ պարում էք, ամեն տեսակ ստեղծագործող աշխատանք սարսափելի կերպով դժուարանում է: Ես չեմ կաւակածում, պարոններ, որ դուք ինձ կօչնէք մղելու Կովկասը դէպք խաղաղացման, զարգացման և առաջդիմութեան ճանապարհը»:

Պարսից Շահի մայրը Թէհրանից ուղևորվում է Մէշէթէ՝ Էնզէլիէ և Կրանսօփօզիկի վրայով: Էնզէլիէից նա կը մեկնի խի 15-ին:

Այսօր թիֆլիսի ժողովարանի ամբարային շինութեան մէջ յոնդի է ունենալու զթուանց յօդուտ «Հայունեաց Բարեգործական ընկերութեան»: Ծրագրեր բաւական հետաքրքիր է, իսկ մուտքի արժէքը բոլորի համար մատչելի է (40 կօպ., իսկ երեխաներին 20 կօպ.): Զբօսանքի սկիզբը ցերեկվայ ժամը 12-ին է:

Բազում, նաւթադաշտի բանտրները մայիսի 1-ի փոխարէն՝ գործադուլ են արել ապրիլի 30-ին: Գործադուլն ընդհանրապէս զօրեղ ցնցումներ չէ առաջացրել և համեմատաբար շատ խաղաղ է անցել, ի հարկէ՝ համաձայն Բագուի լրագրիչների տուած անդեկութիւններին: Նոյն օրը ցերեկվայ ժամը 1-ին նաւթարդիւնաբերողների համաժողովի և մեծ ֆիրմաների ներկայացուցիչների ընդհանուր ժողով է եղել, որի մէջ քննութիւն անելով հասել են այն եզրակացութեան, որ ներկայ գործադուլը խաղաղ նպատակով է արված, մայիսի 1-ը տօնելու համար. Դրա համար որոշվել է դիմել տեղապետ վարչութեան և խնդրել, որ ամեն միջոց գործ դրվի, որպէս էլ գործադուլը խաղաղ անցնի: Որոշվել է նոյնպէս հեռագրել երկրագործութեան մինիստրին, բացատրել անսպասելի գործադուլի պատճառները, ցոյց տալ այդպիսի անակնկալ գործադուլների վնասները թէ արդիւնագործութեան և թէ պետութեան համար և խնդրել, որ տրվի խօսքի ազատութիւն, ժողովների և մամուլի ազատութիւն, որպէս զի կայսրութեան արդիւնագործութիւնը մի բէշ գոնէ ազատվի պատահական, բայց հրէշաւոր վնասներից ու կատաւարօքներից:

«Кавказ»-ը յայտնում է պաշտօնապէս, որ Բելօգորի և Մարէլիսի կայսրանները միջև, թիֆլիսից-Բաթումի գծի վրա, 142-ը վերստի մօտ եղած կամուրջը՝ ապրիլի 30-ին, գիշերով, մի խումբ գիւղացիներ ուղեցել են օդը թոցնել կամ բանդել: Բելօգորից գնացած 6 զինուորները կրակ են արել ամբարի վրա, 3-ին սպանել, 7-ին վիրաւորել և ամբարը ցրել են: Ձարեակված են 6—7 հոգի գիւղացիներ: Վիրաւորվածներից մէկը Բագուի կայսրանի բազմաների բաժնի նախկին կօնդուկտոր է:

Մեզ խնդրում են հետեւել. «Թիֆլիսի Հայունեաց Բարեգործական Ընկերութեան» վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը «Նիդ» Միւրգոյաններ և ընդ. նաւթարդիւնաբերական ընկերութեան» վարչութեան նրա արած նուիրատուութեան (500 ր.) համար յօդուտ վերոյիշեալ ընկերութեան:

Մայիսի 16-ին, ասում է «Ե. ԱՅՅ.» լրագիրը, Բագուի սահմանական դատարանում քնն-

նվելու է գործող վասիլի Բուրովի գործը: Նա մեղադրվում է փետրվարի 8-ին հայ խաւութեան Գալստեանին սպանելու փորձ անելու: Վկաներն են նաւահանգստի մասի պրիստա Բորոգինը և ուրիշները:

Թիֆլիսի կառապանների աւագը չորեքշաբթի, ամիս 4-ին, մի խնդրեք է ներկայացրել քաղաքապետին, որով յայտնում է, թէ, որովհետև կառապանների ըողորը չը յարգվեց քաղաքի կողմից, ուստի վճուել էին երեկ գործադուլ անել, սակայն նրանք, ի պատիւ Փոխարքայի, իրանց մտադրութիւնը ուղղում են իւրագործել նորին պայծառափայլութեան ժամանակուց յետոյ:

Ամիս 4-ին, Օլգինսկայա փողոցում մի տասը տարեկան վրացի երեխայ բարձակի վրայով անցնելիս՝ ընկնում է վագօնի տակը և ջարդվում:

Ամիս 3-ին, Երևանի հրապարակում, մի քանի 12—14 տարեկան տղաներ, խելով մի տիկնոջ ձեռքից պօրածունէն, փախչում են: Յանցաւորներին չը կարողացան ձերբակալել:

Չորեքշաբթի, ամիս 4-ին, Հաւաքարում հիմք դրվեց յանուն Արամեանցի հիւանդանոցի շինութեան, որի համար պարոնը նուրիկ է 100,000 ռուբլի: Հիմնարկութեանը ներկայ էին քաղաքապետը, քաղաքային վարչութեան անդամները և մի քանի ձայնաւորներ: Գաղաքապետը այդ առիթով մի քանի խօսք ասաց, որով շնորհակալութիւն յայտնեց պ. Արամեանցին:

Թիֆլիսի քաղաքները և հիւանդը կայացրել են, իրանց վիճակի բարելաւման վերաբերութեամբ, 14 կէտից բաղկացած պահանջներ: Դրանցից առաջին կէտը պահանջում է 8 ժամ վայ օրական աշխատանք, իսկ շաբաթ օրերը և տօները նախօրէքին 6 ժամ միայն: Մնացած պահանջները մեծամասնութիւնը վերաբերում է իրանց դասի տնտեսական ու առողջապահական վիճակին, իսկ վերջում կան երկու որոշումներ, որոնք վերաբերում են ընդհանուր հասարակական խնդիրներին: Դրանք են. վարպետների անձը և բնակարանները անձեռնմխելի պէտք է լինեն և, վերջին կէտը,—ցանկալի համարել սահմանադիր ժողովի հրահրումը:

Ղազարի գաւառի ԲԱՂԱՆԻՍ գիւղից մեկ գրում են. «Երկու շաբաթից աւելի է, որ մեր գիւղերում անընդհատ անձրև է գալիս, իսկ սարերում ձնէ: Անձրևի գալը, որ գիւղացիների համար երկնային ողորմութիւն է համարվում, այժմ պարտի է դարձել իր երկարատևութեամբ. գարնանավարը մնացել է անկատար, անբեր, գոմերը շատ գիւղերում քանդվելիս, փլատակներից հազիւ-հազ կանայք և երեխաները ազատվեցին. գետերն ու գետակներն անապատներ են դարձել, Ոսկեպատ գիւղի մօտ մի կին խեղդվեց՝ գետով անցնելիս: Մեծ վնաս կը հասնի պողոտաւ ծառերի ծաղիկներին, եթէ եղանակը փոքր ինչ ցրտանայ. անձրևի միակ օգուտը կայանում է նրանում, որ խոտը այս տարի առատ կը լինի: Գիւղացիների տնտեսական դրութիւնը վերին աստիճանի թշուառ է: աղքատութիւնը նրան զաւանցրել, խիղճը մեղքել է. գիւղացիների համար խելորդ բեռ են տանուէրի, ստրաժնիկների ոռձիկները և այլ ծախքերը: Մեր գիւղում ցուցակ կազմեցինք կալերի ժամանակ ցորեն հաւաքելու գիւղական ամբարի համար»:

ՇԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ մեկ գրում են. «Մեր գաւառի մալականներին ապրիլի 10-ի համար հաւատացրել էին, որ հայերը պիտի յարձակվեն նրանց վրա: Մալականներն էլ հաւատով և երկելով սպասում էին շէյթանների որոշած օրին: Մարդկային արեան երակայած գոյնով հունցված այս խմորը դժոխային կրակում թխվում էր ծախ ձեռքով, իսկ աչքով, հալաւակ տեղիս հայերի և թուրքերի մէջ տիրող օրինակելի մտերմութեան, սաթայնական դիմակով ծածկված և կողմերին իրանց բարեկամ ձևացողները, շարունակ երկու կողմերում ևս կանկածելի լուրեր էին տարածում: Բայց ուրախալիկ նա է, որ ոչ մի կողմը հաւատ չէ ընծայում լսածներին, իմանալով, որ շէյթանից բարի ոչինչ սպասելի չէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, ապրիլի 20-ին
Ընթերցող հասարակութեան համար անհետաքրքիր տեղ չէ բռնում Սալմաստի կրթական գործը, որ երկար տարիներից ի վեր կազէկաղ առաջ է գնում և մինչև այժմ մի կանոնաւոր ու որոշ ուղղութիւն չէ ստացել:

Գուցէ շատերը պատճառաբանեն, որ ուսուցիչներ չեն եղել, չեն աշխատել գործը կանոնաւոր հիմունքների վրա դնելու, գուցէ ասեն, որ հասարակութիւնը դեռ ևս պահանջ չէ դարձրել իր համար կրթական գործը, գուցէ պատճառաբանեն, որ մի ուժեղ ղեկավարող ձեռք չէ եղել, որ կարողանայ դարձրել իր վայելի դերքի մէջ դնելու: Բայց մենք կասենք, որ դրանցից և ոչ մէկը հիմնական պատճառ չէ կարող համարվել, որ դպրոցական գործը ներկայումս անսխալանելի վիճակի մէջ է մնացել:

Ճիշտ է, հասարակութիւնը իր համար պահանջ չէ դարձրել, բայց հասարակութիւնից հարկաւոր բիւզժէն առնել է. ուրեմն դպրոցն ունեցել է իր բիւզժէն. հարցը առաւելապէս ծանրանում է ուսուցիչների վրա: Ամենավատ երևոյթը, որ կայ այստեղ, այդ այն է, որ ուսուցիչը 1 կամ 2 տարի է պաշտօնավարում միևնոյն դպրոցում. հազիւ հազ երբ նա արդէն ծանօթացած է լինում աշակերտների բնաւորութիւններին և ընդունակութիւններին, տեղական գիւղական պայմաններին—մէկ էլ տեսաք նա հեռանում է այդ դպրոցից կամ հեռացնում են. գալիս է նոր ուսուցիչ, որը չը հաւանելով իր նախորդի սկսածը, ամբողջ մէկ տարի աշխատում է, քանդում, որ նորից իր «մեթօդով» սկսվի, մէկ տարի էլ իր «մեթօդով» է պարապում և հեռացնում են, և այդպէս շարունակ փոփոխութիւն. այդ հանգամանքը թէ որքան է վնասում կրթական գործի առաջդիմութեան, կարծեմ հարկ չը կայ պարզաբանելու:

Երկրորդ ամենաաչքի ընկնող երևոյթներից մէկն էլ այն է, որ կանոնաւոր պատրաստութիւն ունեցող ուսուցիչներ շատ քիչ են լինում. Սալմաստում գործող ուսուցիչները ստանում են 80—150 թուման (մօտ 120—230 ր.): Ուղեղ ուսուցիչները այդ ոռձիկով չեն կարողանում գոնէ բաւարար ապրել: Միանգամայն սուտ է, որ ապրուստը Սալմաստում էժան է. այստեղ ուտելիքներ արժէքը համարեալ ոչնչով պակաս չէ թիֆլիսում տիրող արժէքից: Ներսիսայեցիք, այս տարի հեռանում են Սալմաստի դպրոցներից 7—8 ուսուցիչներ, որոնք բացի նրանից, որ ստացած ոռձիկներով չեն կարողացել ապրել, այլ և պարտք ունեն և խեղճերը չը գիտեն ունեն ճանապարհածախք պարտք վերցնեն, որ հեռանա Սալմաստից: Այս տարվայ ուսուցիչների թիւը հասնում է մօտ 24-ի, որոնցից 7—8 հոգի տեղացի են, մնացածները հազիւ 3—4 աղատ լինեն պարտքից: Այդպիսի պայմաններով այստեղ ուսուցչութիւն անել նախատակվել կը նշանակէ: Այն պարոնները որոնք յանուն գաղափարի ուղղում են գալ Սալմաստ և գործել ուսուցչական ասպարէզում թող երբեք չը համաձայնվեն 180 թումանից պակաս ոռձիկով գալ այստեղ պաշտօնավարելու, մեր առաջարկած գումարը կարող է ուսուցչին բաւարար ապրեցնել, բայց մէկ կօպէկ յետ դեցել—չը պէտք է մտածել անգամ:

Կովկասում մեր ծխական դպրոցի ուսուցիչները ստանում էին ամենաւաղ 300 ր. ոռձիկ, բնակարան, վառելիք և ծառայ. իսկ այստեղ ոչինչ չեն տալիս, իսկ ոռձիկը 120—220 ր. սենեակի վարձ տուել, ծառայ վարձիւր, վառելիք առ, շոր տու և դեռ ապրել...

Մենք այս տողերը գրում ենք հիմնվելով մեր մի քանի տարվայ փորձառութեան վրա, շատ մօտ ծանօթ լինելով ուսուցիչների դրութեան և ի նկատի առնելով վերջապէս այն, որ մի ամից յետոյ ուղղում են Սալմաստից հեռանալ 7—8 հոգի, բայց ճանապարհածախք անգամ չունեն:

Այս հանգամանքը շատ վատ է ազդում ուսուցիչներ ունենալու խնդրին, մշակն արժանի է իր վարձին, պէտք է ուսուցչին ապրեցնել, որ նա կարողանայ հանգիստ սրտով գործել, առաջ տանել այն գաղափարը, որի համար նա սարքեր ու ձորեր է անցել, ծնողներ և սիրելիներ է թողել...

Այս տարի ըստ երևոյթին շատ անսխալանելի վիճակի մէջ է գտնվելու դպրոցական գործը, հեռացողները տեղերը դժուար թէ բռնվեն այնպիսի չնչին ոռձիկներով:

Ստանդարտի հայերը դեռ երկու չեն մտածում դարձյալ հարկերի և ուսուցիչների մասին, բայց երբ կը գան օտար հովեր... այն ժամանակ նրանք կը հասկանան և «Ո՛ր, տայր» կը արձնան:

Նրանք Աստուած հայ ուսուցչին օգուտ ապրելու շնորհը տուած լինէր, գուցէ այն ժամանակ հայը աւելի գոհ լինէր Աստուծոցէլ, ուսուցչիցէլ...

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՍԿԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՍՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

4 մայիսի

ՍՏՈՎԵՐԻ: «Դադար» հաստատում է, որ Օսկար Թադաւորը յունիսի 1-ին նորից իր ձեռքը կանէ կառավարութեան դէմը:

ՎԻԵՆՆԱ: Կայսրը այցելեց կոմս Գոլուխովսկու արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

ՏՕԿԻՕ: Յայտնի է, թէ ուր է գտնուում ծովագետ Տօգօն: Եսկադրայի ծառայողներին արգելած է գրադրութեան ազգականների հետ: Ապրիլի 26-ին Կօրէական ջրանցքում լսվում էին հրաձգութիւններ:

ՎԱՄԻԿԱՆԻՍԿԱՅ, 3 մայիսի: Բէլաւան կայսրանու փոխարքային ներկայացան պատգամաւորութիւններ քաղաքի, տեղական ժողովուրդների, հրէաների, մօլօկանների և բազմախաների կողմից: Սօլօկանները պաշտօնականութիւն էին խնդրում աւագակութիւններին: Փոխարքան խոստացաւ, որ ամեն ինչ կանգնի երկիրը խաղաղացնելուց յետոյ: Բազմախաներից ընդունեց ամենահպատակ ուղերձ, որի մէջ շնորհակալութիւն էր ցայտնվում կրօնի ազատութեան համար:

ԳՕՄԵԼ: Մատգործների գործադուլը կարգադրվեց:

ՄԻՆՍԿ: Մօսկվա-բէլաւան երկաթուղու գործադուլը շարունակվում է: Գործադուլի պատճառը տուած խնդրագրին բաւարարութիւն չը տայն է:

ԼՕԻՁ: Բանտարկան կազմակերպութիւնը իր պրօկլամացիաներով հրաւիրում է բոլոր բանտարկներին սկսել աշխատանքը և չը յափշտակվել ազդիտացեալ անող կուսակցութիւնների պրօպագանդայով, որոնք իրանց անընդհատ գործադուլներով մուրացկանութեան հասցրին լին ժողովուրդը: Բանից դուրս է գալիս, որ գործադուլները արտասանմանու և Պետերբուրգում այնպիսի սարսափելի չափեր չեն ընդունւում, որպէս Լինստաւոնում: Մօսկվայում և կայսրութեան ուսու ուրիշ քաղաքներում ամենին գործադուլներ չեղան: Ճաւաղութիւն էր ցայտնվում, որ գործադուլները դեռ շարունակվում են և բանտները այդ գործադուլների ժամանակ ընդհարումներ են ունենում ոստիկանութեան և զօրքերի հետ:

ՍՄԱՍՏՎԱ: Մօտ 3000 բանտարկներ գործադուլ արին զանազան գործադուլներում և գործադուլներում: Երկրորդ օր է, որ լրագրներն չեն լոյս տեսնում:

ՍՄԱՄԻՆԱ: Չը կայացաւ տպարանատէրերի համաձայնութիւնը գրադարների հետ: Վարչութիւնը մերժեց բաւարարութիւն տալ քարշաղի ծառայողներին: Գործադուլ արին բեռնողները ու դէպօր և արհեստանոցների բանտարկները: Չասամարսկայա սլօբօդայում կանգ առան ջրաղացները:

ՎԵՆԵԶԻԱՆԻՍԿԱՅ: Մայիսի 2-ին Վէրսինէնէպօլիսկ կայսրան եկան ապրանքատար դնացքով 40 բանտարկներ, որոնք ստիպելին բէլաւան բանտարկներին և արհեստանոցի բանտարկներին խոչնդ աշխատանքները: Մայիսի 3-ին աշխատանքները վերականգնեցին, բայց վերջը էլի դադարեցին: Չորս դրէիներ ձեռք բաղկաված են:

ԿԱՉԱՆ: Շատ նաւահանգիստներին բեռնողներ դադարեցրին աշխատանքը: Այսօր աշխատանքը վերսկսվեց, բացի «Նադեժդա» ընկերութիւնից, ուր նաւատարներն են բեռնում ապրանքները:

ԼՕՆԴՈՆ: (Սեփ. թղթակցից): Մայիսից ստացված վէճի տեղեկութիւնները համեմատ, մի քանի ածխատար նաւեր Մայիսից գնացին ապրիլի 30-ին ածուխի բեռով Բօժնուփոսկու էսկադրայի համար: Կարծում են, որ ուսական նաւերը գտնվում են Տուանդայ ծովախորշում 35 մղոն դէպի հիւսիս Վարէլա հրօսանդանից: «Լօյդի» տեղեկութիւնները համեմատ, որ հաստատվեց, վերջին տեղեկութիւնը եազմական նաւերի խորտակման մասին վերաբերում է եազմական նաւատորմի այն կորուսաններին, որոնք տեղի ունէին անցեալ շաբաթ: Պարիզից ստացված տեղեկութիւնները համեմատ, մայիսի 2-ին ներկայաց-

րեց Ֆրանսիական կառավարութեանը երրորդ բողոք այն բանի առթիւ, որ Բօժնուփոսկու կէն խախտեց Ֆրանսիական չէզոքութիւնը:

5 մայիսի

ՄՕՍԿՎԱ: Ընկերակցների տան բնութիւնը երևան հանց անկարգութիւններ և դեղձուներ: Պաշտօնատար անձանց կազմը փոխված է: Կառավարչութիւնը ժամանակաւորապէս յանձնված է կայսրութիւն Մարիայի վարչութեան կօնտրօլօրին:

ՄԻՆՍԿ: Գործադուլ արին Լիբաւօ-րօմէնեան երկաթուղու բանտարկները, պահանջելով տուած պէտքիցայի բաւարարութիւն:

ԳԻՐԱՆՍԿԱ: Ալեքսանդր Թադաւորի կէսօրին ժամանեց «Բօյա» դրօշմաւորով:

ԼԻՏՏՏԻՆ: Յուցանդեֆտի սարքումը արագութեամբ առաջ է գնում: Ռուսական բաժինը կարելի է աւարտված համարել: Կենտրոնական տեղը գրաւում է Նորին Մեծութեան կարիէտը, ապա գալիս են անայնադործական, Կարմիր Նաչէ, պրինց Օլեքսեւրօսկու, լուսնակալական և գեղարուեստական բաժինները: Ռուսական բաժինը գրաւած ունի երեք դահլիճ:

ՌԻՅԱ: Նահանգապետ Սօկոլովսկի գտնվում է լուրջ վտանգ ներշնչող դրութեան մէջ:

ՊՅԵՕՎ: Նահանգական գէմստօփ արտակարգ ժողովը վճռեց միջոցառել ներքին գործերի մինիստրի առաջ, որ շտապեցնվի փետրվարի 18-ի Բարձրագոյն ընկերակցութիւնը յիշատակված առանձին խորհրդակցութեան հրաւիրելը և թոյլատրվի մասնակցել նրա մէջ Պազովի գէմստօփի ներկայացուցչին:

ԲԵՐԼԻՆ: «Կեյսեր» Լրագիրը պաշտօնապէս հերքում է այն լուրերը, թէ Գերմանիան կառուածներ է գրաւել Չինաստանում, յայտնելով, որ երբէք Բերլինից հրամաններ տրված չեն եղել նոր կառուածքների ձեռք բերելու մասին:

ՊԱՐԻՉ (Սեփ. թղթակցից): Քաղաքական շրջաններում խօսու է միջազգային խորհրդի նախագծի մասին Մակեդոնիան կառավարելու համար: Ուրոշուրը կազմված էր լինի առանձին տեղեկ անձները, որոնք լիազօրութիւն կունենան Յրանիայից, Ռուսաստանից, Անգլիայից, Գերմանիայից, Աւստրիայից և Իտալիայից: Ուղղաբարութիւններ կատարելուց յետոյ ծովագետ ժօնկէր վերադարձաւ Մայիս: Բօժնուփոսկի յայտնեց, որ այսուհետեւ իր հայեցողութեամբ կը վարվի: Յուցեղները և նկատողութիւնները նրա գործողութիւնները յատկապէս մասին չը վերաբերվեցին նրան: Ուստադոյն կարգապահութիւն է տրուում էսկադրայի վրա: Լրագիր թղթակցեց Գանուում, որին բռնել էր «Կանչատկա» փոխադրանաւը, հեռագրում է, որ ուսական միացեալ էսկադրաները պատրաստ էին լողալու դէպի Վրադիվօստօկ:

5 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական տեղեկութիւններ Հեռաւոր Արեւելից չեն ստացված: Մայիսի 3-ին Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան այցելեց Նորին Բարձրութեան հիւանդանոցը, որ շինված է հիւանդ և վիրաւոր զինուորային համար Կրանսօի Մեյրօլում: Մայիսի 4-ին Նորին Բարձրութիւնը այցելեց Սանտօվսկի զինուորական հիւանդանոցի հաւաքատեղին, ուր գետնոված են նախընթաց օրը Հեռաւոր Արեւելից եկած 261 հիւանդ և վիրաւոր զինուորային: Մեծ Իշխանուհի Կօնստանդին Կօնստանդինօվիչը իր ամուսնու հետ վերադարձաւ Պետերբուրգ:

ԳՐԻՆԶՈՒԼԻՆ, 2 մայիսի: (Սեփ. թղթ.) Ընդհանուր դրութեան մէջ փոփոխութիւն չը կայ: մեր զօրաբաժիններից մէկը, խուզարկութիւններ կատարելիս Դաւիթօսէ գետի ափերում, գրաւեց Չժնդդատուն քաղաքը, ուր կային միայն խուլիկներ, որոնք ցրվեցին դէպի հարանգիւղեր:

ՊԱՐԻՉ: Մայիսի 5-ին: Չօրքերը, որոնք ուղարկված էին Ինչէն ապստամբութիւնը ճնշելու, փախան: Սիրիայի ազգաբնակչութիւնը փախչում է ազատվելու անգլիական հողի վրա: Իշխանութիւնները նորից ուղարկում են փախուսողներին դէպի թիւրքական նաւահանգիստները: Ապստամբների դէմ կուող զօրքերին ուղարկված է 18,000 օգնական զինուոր: Արաբները արդէն ունեն 150,000 զօրք: Նախագահ Լուրէ իր ամուսնու հետ երէկ այցելութեան գնաց պրինց Արիստօպոլային: Չէզոք պետութեան զինուորական գործակալի ասելով՝ եազմական հեծնազօրքը շատ խեղճ դրութեան մէջ է և չէ կարող օգտուել կերպով ծառայել գործին: Կօրէական կայսրը ուղարկեց գերմանական թագաժառանգին, նրա պըսակազրութեան առթիւ, մի անձնագիր նախ թանգապին ընծայել հետ միասին:

ՏՕԿԻՕ: Մայիսի 4-ին: Յրանիական իշխանութիւնները ստացան նահանգապետի և ծովագետի կողմից հաւատարմագրի, որ բաւական նաւատորմը արդէն մի քանի օր է չէ երևացել հնդկա-չինական ջրերում: Չանագան զեկուցումներից, որոնք ստացված են Եազմական գլխաւոր բանակատեղից, երևում է, որ ուսական ոյժերը, որոնք դիմագրութիւն են ցոյց տալիս եազմական առաջխաղացմանը դէպի Կայրւան, գրաւում են հետեւեալ դիրքերը: Ուսական ռազմագիծը ձգվում է մօտ 30 մղոն երկարութեամբ և 35 մղոն դէպի հիւսիս Կայրւանից կտրում է երկաթուղային գիծը: Ռուսները զօրեղ ամրութիւններ են կառուցել Դունչօուլիում, որտեղ շատ աւելի բարձր դիրք կայ, քան Տէլինում: Երկու-երեք ամրակոյններ, խրամատներ և պաշտպանողական ամրութիւնների կառուցումը ուսաց ռազմագիծը զանազան կէտերում վերջացած է արդէն: Ինչ ժամանակ առաջ հասան 20,000 նոր զինուորային: Համարում են, որ Մուկդէնի ճակատամարտից յետոյ ուսաց բանակը 60,000 օգնական զօրք է ստացել: Եազմականները կարգի են բերել երկաթուղու գիծը հիւսիսում համարեալ մինչև Սիպինգա, 45 մղոն դէպի Կայրւանից:

ՊԱՐԻՉ, 5 մայիսի: Չօնգիւնգ եկած «Վօնգիօյ» շոգենաւը հաղորդում է, որ մայիսի 1-ին բաւական էսկադրայի 42 նաւեր դուրս եկան Ունիօն ծովախորշից: Նրանք բոլորն էլ նորից ներկված էին և գեղեցիկ դրութեան մէջ:

ԼՕՆԴՈՆ, 4 մայիսի: Անգլիական «Երբե» շոգենաւի հետ, որը պատկանում է շոգենային ընկերութեանը Սոկլօսում (Դուրքում կոմսութեան մէջ), Սև ծովով անցնելու ժամանակ մի անսովոր դէպք պատահեց, նրա վրա երեք անգամ հրաձգութիւն եղաւ, երկու անգամ դատարկ փամփուշտով իսկ մէկը ուսկրով, որը մօտով անցաւ: Կէրչ զալուց յետոյ կապիտանը զանգաւորեց անգլիական հիւպատոսին: Այդ դէպքը հնարաւոր է բացատրել միայն նրանով, որ «Երբե» մի փոքր նման է կրէյսերին: ՉՕՆԿՕՆԳ, 4 մայիսի: Գերմանական զօրքերի խայծօտ ափ ինչեղները մասին նորերս անորոշ, բայց յայտնաւորեցին առթիւ չինացիները հաղորդում են, որ այսօր գերմանացիները ափ իջան Տեանգա կղզու վրա: «Սայնան» կրէյսերին յանձնված է բնութիւն կատարել: Սակայն կարծում են, որ գործը առանց որ և է դժուարութեան կը կարգադրվի տեղի վրա:

ՏՕԿԻՕ, 4 մայիսի: Այստեղի իշխանութիւններ չը թոյլատրեցին եազմացի վաճառականին 4500 տօնն ածուխ ուղարկել Մայիս: Այստեղ ստացվել է հաստատող տեղեկութիւն, որ գերմանական զինուորական նաւը ափ է իջեցրել ծովագնացներին խայծօտ և աչքի է անցրել նաւահանգիստը և նրա շրջակայները: Յայտնի է, որ Գերմանիան նորերս եռանդուն ճնշում էր գործում Չինաստանի վրա կօնցելիս ստանալու համար Շանգհայում և մանաւանդ նաւահանգիստը Օղդիդաօի և Շանխայի միջև: խայծօտ նորերս անկարգութիւններ էին, որ սարքել էին աղի կօնտրաբանային առևտուր անողները: Այստեղի գերմանացիները հաւանական են գտնում, որ մի քանի գերմանական ականանաւեր ուղարկված են այդ գործը ըննելու համար և որ այդ հանգամանքը երկի պատրուակ կը ծառայէ դրօշակ բարձրացնելու համար:

ՇԱՆԳՀԱՅ, 4 մայիսի: Ռուս-չինական բանկը անգլիական զաւաթարանին խնդրեց ներկայացրեց, պահանջելով իրանից հաստատում «Շանցը» ապահովագրական ընկերութիւնից, այն է 19,500 լան, որ կազմում է եազմացիների գրաւած «Նէգրեցիա» շոգենաւի բոխարժողութիւնը: Ընկերութիւնը հաստատում է, որ բոլոր կօնտրանդա չէր և յարգունիս գրաւվեց այն պատճառով, որ շոգենաւի վրա կային խոստմնարութ ռուս օֆիցէրներ:

ԱԹԷՆԻ, 4 մայիսի: Ապստամբական շարժումը Կրետէի վրա տարածվում է ամբողջ կղզում: Հաղորդում են ապստամբութիւնների մասին Կիսսամօսում, արեւմտեան շրջանում: Անուանի կրետացի Ֆուդալիդէս 240 մարդուց բաղկացած զօրախմբով ուղևորվեց Սիտիա, կղզու արեւելեան ծայրի վրա, և փոխեց տեղական իշխանութիւնները: Այդ շրջանի ժանդարմները բերված են Կանէյա խաղաղական զինուորական նաւով: Թիւրքական ընտանիքները գիւղերից հաւաքվում են Կանէյայում: Ինչպէս նախկին ապստամբութիւնների ժամանակ իշխանութիւնները հրաժարվում են շրջապատել քաղաքը զօրքով: Մանիքականները երկու-մէկ են քրիստոնեաներին դէնք բա-

ժանկու պատճառով: Դադիցները շարունակվում է: Հաւանական է երևում, որ աւաղակները յարձակումները յունական լրագրների թղթակցների, Վենիզոյօի կուսակցութեան համախոհների վրա, Աթէնքի մօտ լի գայրոյթը կառավարեն:

ՊԱՐԻՉ, 5 մայիսի: Տօկիօի գերմանական դեսպանը հերքում է խայծօտ գրաւելու լուրը, յայտնելով, որ այդպիսի միջոցը բոլորովին կը փոխէր գերմանական քաղաքականութիւնը Հեռաւոր Արեւելքում: Մայիսիական թագաւորը շնորհեց էրօւարդ Թագաւորին սպանիական նաւատորմի ծովագետի կոչումը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍՍԱՆ

3 մայիսի

Բօրսայի դիվիզիոն	5 1/2—63/4%
Պետական 40/0 բնութան	— — —
Մաղար. տոմսեր	379 —
»	290 1/4 —
»	256 —
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — —
Բազուի	— — —
Թիֆլիսի հող. բանկի 50/0	— — —
»	41/20 —
Վազուի նաւթ. Ընկ.	410 —
Կասպիական Ընկ.	— — —
Մանիքական Ընկ.	195 —
Նօրէլի և ընկ.	9950 —

Նմանադր. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԹԱՐ
Հրատարակչներ. ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՀԱ ՄԵԼԻԳ.ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԷՏՏԵԼԻ ԹԱՏՐՈՆ
Կրակի, մայիսի 8-ին
Պ. Մ Ա Ր Ի Կ
Կը ներկայացնէ սեփական րեպրտուարից առաջին անգամ

Ս Ա Տ Ա Ն Ա Ն
գրամա 2 գործ. հեղ. Մարիկի
Վ Ե Ր Ը

ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ
Պիէսա 1 գործ. հեղ. Ա. Արէլիանի
Սկիզբն է հիշք 9 ժամին երեկոյեան:
Տեղերի գները 3 ր. մինչև 30 կ.
Տոմսակները վաղօրոք կարելի է ստանալ «Լև» ծխախոտի խանութում (Գօլփիսկ պը.), իսկ ներկայացման օրը Թատրօնի կասսայում: (1, 5, 8) 3—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Դ Է Մ Ի Դ Օ Վ
Մանկաբարձութեան և կանանց հիւանդութեան
Ընդունելութիւն ասին օր 12 1/2—3
Ռէուսօվսկի փողոց № 22, տէլեֆօն № 313:
(2.) 3—3

«ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»
Հրատարակչական ընկերութիւն
Լոյս են տեսել

Ժողովրդական սէրիայից
ա. Դեմիտրիւս Գ. Ուստաւորներ և աշուղի
հէքաթըր 7 կ.
բ. Վերնաւի Վ. Մի անմեղ մարդու սոսկալի
մահը—6 կ.
գ. Նիխաւց Մ. Մի մահ և Անտակը—7 կ.
դ. Երկվան-Շաւրիան. Ժամագործի յիշողութիւններից—8 կ.
ե. Մի պոյս ձայնում, հեղին. օր. Հ. Մէլիք-Հայկազան, 25 պատկերներով, 192 երես—40 կ.
Դիմել գրախանութիւններին. պահեստը Թիֆլիս, Բհերութեան փող. 29, «Տ. Լիսիպանի և Կ.»:
Նոյն տեղում կարելի է գնել «Հայ-բանաստեղծներ» սէրիայի 1—5 գրքերը, և Դ. Աղայեանի «Հէքաթերը» I—II—15. ական կ. (3, 9, 11, 15) 1—4

Զգուցաղի կեղծումներից
ԱՌՂԱՊԱՆԱՅԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՈՒԵԱՆ ՍԱՊՈՆ
Դեղագործ
Ի. Ֆ. ԻՐԳԵՆՍԻ
Ոչնչացնում է պղունները, այրվածքները, դեղին բծերը, ուսուցչները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը: Յանձնարարվում է իւր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի:
Ոսկի մեղալ Լօվոֆում 1893 թ. Կսորի զինը 50 կ., 1/2 կսոր 30 կ.: Մախվում է բոլոր ամառային դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում:
Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իրգենսի մօտ Մօսկվայում: (4, 19) 10—24

Այս յայտարարութիւնը տպված է «Правитель. Вестник»-ի № 43/1903 թ.:

